

Վարդուհի ՄԻՐԻԶՅԱՆ*
Երևանի պետական համալսարան

**ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ
ԳՈՐԾԱՌԱԿԱՆ-ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ
ՀՀ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
ԱՆԳԼԵՐԵՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՈՒՄ**

Սույն հոդվածն ուսումնասիրում է կրավորական սերի կիրառությունն իրավական խոսքում, և մասնավորապես դրա գործածությունը ՀՀ ընտանեկան օրենսգրքի անգլերեն և հայերեն տարբերակներում: Որակական և քանակական, ինչպես նաև իրավիճակային-փաստարկային քննության մեթոդների կիրառմամբ բացահայտվում են կրավորական կառույցների նպատակային կիրառությունը, առավելագույն ճշգրտություն ապահովելու միտումը, գործառական-հաղորդակցական առանձնահատկություններն ու դրանց կողմից իրացվող գործառույթներն իրավական խոսքում: Հետազոտությունը նաև փաստում է, որ կրավորական սերի կիրառելիության հաճախականությունը պայմանավորված է իրավական խոսքում գործողության և ոչ թե գործողություն կատարողի դերի կարևորությամբ:

***Բանալի բառեր.** իրավական տեքստ, կրավորական սեր, գործողություն, գործողություն կատարող, գործառույթ, թարգմանություն*

Ներածություն

Իրավական լեզուն պաշտոնական լեզու է, պետական իշխանության լեզուն, որի միջոցով իշխանությունն ու համապասասխան կառույցները հաղորդակցվում են անհատների և տարբեր կազմակերպությունների հետ: Օրենքը չի դիմում կոնկրետ անձի, այլ անձին որպես հասարակության մասի և հասարակությանը, որպես ամբողջություն: Օրենքի լեզվին լայն առումով բնորոշ են անհատական ոճի բացակայությունը և շարադրանքի յուրահատուկ մասնագիտական

* varduhi.miridzhanyan@ysu.am



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 25/04/2023

Revised: 11/06/2023

Accepted: 19/06/2023

© The Author(s) 2023

բնույթը: Իրավաբանական տեքստի հիմնական և առաջնային գործառույթը առավելագույն ճշգրտություն ապահովելն է, որը իրացվում է և պարզ, և բարդ նախադասությունների միջոցով: Ընդ որում, նշված երկու տեսակի կառույցներում էլ, հատկապես բարդ նախադասություններում, մեծ է կրավորական սեռի կիրառելիության հաճախականությունը (Ապրեսյան, Կարապետյան, 2014):

Բայի սեռը մատնաշում է ինչպես գործողությունը, այնպես էլ գործողությունը կատարողին (Olsikpe, 2006): Իրավական լեզվում գործողության գործառական դերն ավելի կարևոր է, քան գործողություն կատարողինը: Անգլերենում բայի երկու սեռերից առաջինը (the Active Voice) համապատասխանում է հայերեն ներգործական և չեզոք սեռերին, իսկ երկրորդը (the Passive Voice) համապատասխանում է հայերենի կրավորական սեռին, որը կազմվում է *to be* օժանդակ բայի համապատասխան կերպաժամանակային ձևի և լիմաստ բայի երկրորդ դերբայի հարադրությամբ (Թոքմաջյան, 1995, էջ 102):

Ըստ Ուիլյամսի կրավորական սեռը բնութագրում է խիստ անանձնական գրելաճճ և բնորոշ է անգլերենի բոլոր տեսակի իրավական փաստաթղթերին (Williams, 2011, p. 114): Փաստաբաններն այն օգտագործում են հնքնաբերաբար, ուստի և օրենքները, և դատական որոշումները սովորաբար պարունակում են բայի կրավորական սեռ, հատկապես երբ ներկայացնում են պարտավորություններ, պայմաններ, օրենսդրական դրույթներ: Վիդիկը, քննադատելով իրավական խոսքը, նշում է, որ այդտեղ կրավորական սեռի հիմնական թերությունն այն է, որ ավելի շատ բառեր են պահանջվում գաղափարներ արտահայտելու համար (Whydick, 2005, p. 127): Հետազոտողը վկայակոչում է *The union filed a complaint* (*Արհմիությունը բողոք ներկայացրեց*) ասույթը, որտեղ *filed* բայը ներգործական սեռով է կիրառվել: Բայց երբ այն կիրառվում է կրավորական սեռով՝ *A complaint was filed by the union* (*Բողոք ներկայացվեց Արհմիության կողմից*), ապա *filed* բայը պահանջում է հավելել *was* օժանդակ բայը և *by* նախդիրը, որն էլ ասույթը դարձնում է ավելի երկար և խրթին: Այս պնդումը բավարար չէ կրավորական սեռը իրավական խոսքում անտեղի համարելու համար, քանի որ կրավորական սեռի կիրառությունը նպաստում է իրավական խոսքի առավելագույն ճշգրտություն ապահովելու միտմանը և, ինչն ընդունում է նաև վերոնշյալ քննադատը, հիմնականում կարևորում է գործողության և ոչ թե գործողություն կատարողի փաստումը: Թեև երբեմն ներգործական սեռի կիրառությունը ավելի ընկալելի է դարձնում խոսքը յայն հանրության համար, այդուհանդերձ կրավորական սեռը խոսքին հաղորդում է անուղղակիություն և պաշտոնական երանգ,

որի շնորհիվ էլ մասնագետներն իրենց ավելի ազատ և «հարմարավետ» են զգում տվյալ խոսքի տիրույթում (Haigh, 2004, p. 37).

ՀՀ ընտանեկան օրենսգրքի անգլերեն և հայերեն տարբերակների համեմատական վերլուծություն

Ներգործական կառույցը ակտիվ խոսք է, կրավորականը՝ ոչ ակտիվ: Ինչպես արդեն նշեցինք, կրավորական խոսքում ընդգծվում է ինքնին գործողության կատարման փաստը՝ անկախ այն բանից, թե ով է կատարողը, քանի որ կարևորվում են չեզոք վերաբերմունքն ու չեզոք մոտեցումները, որոնք էլ հատկապես կարևոր են անկողմնակալության գործառույթ իրագնող իրավական խոսքում: Փաստենք, որ ներգործական կառույցների կիրառությունը գերիշխում է ինչպես անգլերեն, այնպես էլ հայերեն իրավական փաստաթղթերում: Ասվածը դիտարկենք ՀՀ ընտանեկան օրենսգրքի անգլերեն և հայերեն տարբերակների (Ընտանեկան օրենսգիրք, 2005; Family Code, 2005) համապատասխան դրույթների հիման վրա:

ARTICLE 15. DIVORCE IN THE CIVIC STATUS REGISTRATION DEPARTMENT

On basis of the application from one of the spouses the divorce **is realized** in the Civic

Status Registration Department if the second spouse:

- a) **is recognized** missing by court:
- b) **is recognized** incapable by court:

Հոդված 15. Ամուսնայունությունը քաղաքացիական կազմության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում

Ամուսիններից մեկի դիմումի հիման վրա ամուսնայունությունը **կատարվում է** քաղաքացիական կազմության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում, եթե մյուս ամուսինը՝

- ա) *դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող.*
- բ) *դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ.*

Բերված փաստական օրինակները գուցե են տալիս, որ, թեև կրավորական կառույցներում առավել կարևորվում է գործողությունը, քան այն կատարողը, իրավական խոսքի ոչ միայն (1) **անկողմնակալության**, այլև (2) **ճշգրտության** և (3) **հստակության** գործառույթների իրագումը պահանջում է, որ ուղղակի և կոնկրետ նշվի նաև գործողություն կատարող իրավասու կառույցը:

Կրավորական սեռի կառույցները հնարավորություն են տալիս հաղորդակցական նպատակն ընդգծել առավել հստակ, երբ ձևակերպում են, որ ամուսնալուծվողներից մեկը *դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող, դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ* (*the court recognizes missing; the court recognizes incapable*):

Կրավորականը սեռը լեզվական հարմար միջոց է նաև այն դեպքում, երբ անհրաժեշտ է կարևորել ոչ միայն գործողությունը, այլև դրան առնչվող հանգամանքները: Օրինակ՝

ARTICLE 151. ASCERTAINING OF THE NORMS OF FOREIGN FAMILY LAW

If by the measures **undertaken** according to Provision 1 of the given Article the contents of a foreign family law norms **is not ascertained** within reasonable terms, the RA Legislation **is applied**.

Հոդված 151. Օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմերի բովանդակության պարզումը

Եթե սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան **ձեռնարկված** միջոցներով ողջամիտ ժամկետում **չի պարզվում** օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմի բովանդակությունը, ապա **կիրառվում է** Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

Վերոնշյալ ասույթի անգլերեն տարբերակում *undertaken* դերբալի կիրառության դեպքում գործ ունենք ոչ թե զուտ կրավորական կառույցի, այլ կրավորական երանգ հաղորդող հետևյալ փոխակերպված մոդելի հետ.

They undertook the measures. → *The measures were undertaken.* → *undertaken measures.*

Հալերեն տարբերակում *ձեռնարկված* հարակատար դերբալի կիրառությունը ապահովում է յիարժեք կրավորական իմաստ: Բերված փաստական օրինակների ն՝ հալերեն, ն՝ անգլերեն տարբերակներում կրավորական կառույցների կիրառությունը ապահովում է ինչպես գործողության (*ձեռնարկված, undertaken*), այնպես էլ գործողությանն առնչվող հանգամանքների (*չի պարզվում, կիրառվում են, is not ascertained; is applied*) պարզաբանման գործառույթ, այսինքն, թե ո՞ր դեպքում կամ ի՞նչ հանգամանքներում է գործում ՀՀ օրենսդրությունը: Այստեղ արդեն բացարձակապես չեն ընդգծվում

գործողություն կատարող կառույցները, քանի որ տվյալ խոսքի գործառական-հաղորդակցական նպատակի իրագումր պայմանավորված է միայն կրավորական գործողության կատարմամբ: Այսպիսով, տվյալ խոսքային նմուշում կարևորվում են **(4) գործողության** և **(5) գործողությանն առնչվող հանգամանքների պարզաբանման գործառույթները**:

ARTICLE 150. ADOPTION

If as a consequence of adoption the rights of a child **stipulated** by the RA Legislation and the RA international treaties **may be violated**, the adoption **cannot be realized** regardless of the adopter’s citizenship, and the **implemented** adoption is subject to cancellation by judicial procedure.

Հոդված 150. Որդեգրումը

Եթե որդեգրման հետևանքով **կարող են խախտել** Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով **սահմանված** երեխայի իրավունքը, ապա որդեգրում **չի կարող կատարվել** անկախ որդեգրողի քաղաքացիությունից, իսկ **կատարված** որդեգրումը ենթակա է վերացման դատական կարգով:

Երեխայի որդեգրմանը վերաբերող վերոնշյալ դրույթներում հարակատար դերբայի (*սահմանված, stipulated, կատարված, implemented*) գործողության կատարման անհրաժեշտություն արտահայտող իմաստը խտացվում է ոչ միայն գործողություն կատարողի անվանակոչմամբ (*Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված, stipulated by RA Legislation and the RA international treaties, կատարված որդեգրումը, implemented adoption*), այլև եղանակավորող բայի կրավորական կիրառությամբ (*կարող են խախտվել, չի կարող կատարվել, may be violated; cannot be realized*): Հարկ է նաև նշել, որ *կատարված որդեգրում (implemented adoption)* որոշիչ երկրորդական նախադասության զեղչմամբ հանդես եկող կառույցների կիրառությունը բնորոշ է ն՝ հայերեն, և՛ անգլերեն տարբերակներին: Հետևաբար, կրավորական կառույցներն այս դեպքում իրացնում են գործողության կատարման **(6) ինտենսիվացման** կամ **խտացման** գործառույթ:

Ի վերջո, ավելորդ չենք համարում կրավորական կառույցների վերաբերյալ անել մի կարևոր դիտարկում ևս. կրավորական կառույցները բնորոշ չեն հայերեն լեզվամտածողությանը և գրական հայերենում առանձնապես գործածուն չեն (Ավետիսյան, Սարգսյան, Մկրտչյան, 2019, էջ 182): Հայերեն իրավական խոսքին նույնպես բնորոշ է ինչպես բուն կրավորական կառույցների, այնպես էլ խոսքին կրավորականություն հաղորդող դերբայների և որոշիչ երկրորդական նախադասության զեղջմամբ հանդես եկող միավորների կիրառությունը, թեև ոչ նույն չափով, որքան անգլերենում: Ընդհանրապես իրավաբանական փաստաթղթերին բնորոշ լեզվի հայերեն կրավորական կամ կրավորական իմաստ արտահայտող ասույթների հետևյալ օրինակներում՝ *դատարանի կողմից որոշվեց նիստը հետաձգել, հայցվորի կողմից ներկայացված փաստաթուղթ, պատասխանողի կողմից մերժված առաջարկ, գործատուի կողմից լուծարված պայմանագիր*, կարևորվում է ոչ միայն գործողությունը, այլև գործողություն կատարողը: Հանդիպում են նաև հայերենի սխալ կիրառություններ, ինչպիսիք են *օրենքի կողմից նախատեսվող, օրենսգրքի կողմից սահմանվող* կապակցությունները: *Կողմից* կապը գործածվում է անձ ցույց տվող կամ անձի առմամբ դրված գոյականների հետ (*դատավորի կողմից, ներկայացուցչի կողմից, դատարանի կողմից*), մինչդեռ իր ցույց տվող գոյականները ներգործող խնդրի պաշտոնում կիրառվում են առանց *կողմից* կապի և դրվում են բացառական կամ գործիական հոլովներով՝ *օրենքով նախատեսվող, օրենսգրքով սահմանվող*: Տարիների ընթացքում այսպիսի սխալներն ավանդույթի ուժով մտել և ամրապնդվել են հայերեն իրավաբանական գրագրության մեջ, դարձել մասնագիտական լեզվամտածողության անբաժան տարր: Վստահաբար կարող ենք ասել՝ սա իրավաբանական գրագրության խոցելի կողմերից մեկն է: Այսպիսի սխալի պատճառը, ամենայն հավանականությամբ, անգլերենից բառացի թարգմանությունն է: ՀՀ ընտանեկան օրենսգրքն այս առումով կարելի է անթերի համարել: Օրինակ՝

ARTICLE 11. BARRIER CONDITIONS FOR MARRIAGE CONCLUSION

Marriage conclusion is prohibited:

- a) if at least one of the persons is in a marriage, registered by the procedure **established** by the law;

Հոդված 11. Ամուսնության կնքմանն արգելք հանդիսացող հանգամանքները

Արգելվում է ամուսնություն կնքել՝

ա) այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկը գտնվում է օրենքով **սահմանված** կարգով գրանցված մեկ այլ ամուսնության մեջ.

ARTICLE 14. THE PROCEDURE OF DIVORCE

The divorce is realized in the Civic Status Registration Departments in cases **stipulated** by the given Code and by the procedure **established** by the Legislation, as well as by Judicial procedure.

Հոդված 14. Ամուսնալուծության կարգը

Ամուսնալուծությունը կատարվում է «Քաղաքացիական կացության ակտերի մասին» օրենքով **սահմանված** կարգով՝ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում կատարող մարմնում, ինչպես նաև՝ դատական կարգով՝ սույն օրենսգրքով **նախատեսված** դեպքերում:

ARTICLE 15. DIVORCE IN THE CIVIC STATUS REGISTRATION DEPARTMENTS

The disputes on the share of the common property of the spouses, on meeting the living expenses of an incapable vulnerable spouse, as well as disputes on children **are considered** by judicial procedure irrespective of the marriage cancellation in the Civic Status Registration Department in accordance with the procedure **established** by Article 17 of the given Code.

Հոդված 15. Ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում

Ամուսինների ընդհանուր գույքի բաժանման, անաջխատունակ անապահով ամուսնու ապրուստի միջոցը հոգալու վերաբերյալ վեճերը, ինչպես նաև երեխաների պատճառով ամուսինների միջև ծագող վեճերը **քննարկվում են** դատական կարգով անկախ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնությունը լուծելուց՝ սույն օրենսգրքի 17-րդ հոդվածով **սահմանված** կարգով:

ARTICLE 21. PERSONS WHO HAVE RIGHT TO PRESENT REQUIREMENTS TO RECOGNIZE THE MARRIAGE INVALID

the spouse whose rights **have been violated** by the presence of facts **stipulated** by Provision 3, Article 12 of the given Code.

Հոդված 21. Ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավուք ունեցող անձինք ամուսինը, որի իրավունքները **խախտվել են** սույն օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ մասով **նախատեսված** հանգամանքների առկայության պատճառով:

Եզրակացություն

Ի մի բերելով հետազոտության արդյունքները՝ նշենք, որ ընդհանրապես իրավական խոսքի և մասնավորապես ՀՀ ընտանեկան օրենսգրքի անգլերեն և հայերեն տարբերակների ուսումնասիրությունը գույց է տալիս, որ ինչպես փոխակերպված, այնպես էլ չփոխակերպված կրավորական սեռի կառույցների գործածությունը խիստ կարևոր նախապայման է իրավաբանական փաստաթղթերի հստակ և մատչելի ձևակերպման գործում: Կրավորական կառույցները իրավական խոսքին և փաստաթղթերին տալիս են մասնագիտական և պաշտոնական երանգ, առավել կարևորում դրանց ճշգրտությունը, նպաստում անկողմնակալության, հստակության, իրավական գործողությանն ու գործողությանն առնչվող հանգամանքների պարզաբանմանը, գործողության կատարման ինտենսիվացման գործառույթների իրացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Family Code. The Law of the Republic of Armenia (2005). http://www.parliament.am/law_docs/081204HO123eng.pdf?fbclid=IwAR3O5zGyaHsMp7hUGpWvGm24pJw8tIdN5El7bYYPw4c0YwjdIp7pWPButQ3Y
- Haigh, R. (2004). *Legal English*. Cavendish.
- Oluikpe, B. O. A. (2006). *The Use of English for Higher Education*. Fep Publishers.
- Whydick, R. C. (2005). *Plain English for Lawyers*. Carolina Academic Press.
- Williams, C. (2011). Legal English and Plain Language. *ESP Across Cultures*, 8, 139-149.

- Ապրելյան, Մ., Կարապետյան, Մ. (2014): Իրավագիտական խոսույթի հատկանիշները: *FLSP*, 2/11, 70-80:
- Ավետիսյան, Յ., Սարգսյան, Լ., Մկրտչյան, Ա. (2019) Իրավական փաստաթղթերի լեզուն. շարահյուսական հոմանիշ կառույցների ընտրություն: *Հանդես*, 1, 176-190:
- Ընտանեկան Օրենսգիրք: Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրք (2005): https://www.arlis.am/?fbclid=IwAR3n4Z0xocj2OF_MdRQzScexyjiwhzkGMys8wnbHAOYy0DfqJ68QfVijEes
- Թորմաջյան Հ. Ա. (1995) *ժամանակակից անգլերենի քերականություն*: Փյունիկ:

V. MIRIJANYAN – *The Functional-Communicative Value of Passive Constructions in English and Armenian Versions of the RA Family Code.* – The article examines the use of passive voice and passive structures in the legal context, and particularly its use in the English and Armenian versions of the RA Family Code. Based on qualitative and quantitative, as well as case study methodology, the purposeful use of passive structures, their tendency to ensure maximum accuracy, as well as their functional-communicative features and the functions performed by them in legal speech are revealed in the study. The research also states that the frequency of applicability of the passive voice is due to the emphasis on the role of the action and not on the doer in both English and Armenian versions of the mentioned document belonging to legal discourse.

Key words: legal text, passive voice, action performed, action performer, function, translation

В. МИРИДЖАНИЯН – *Функционально-коммуникативное значение пассивных конструкций в английской и армянской версиях Семейного кодекса РА.* – В данной статье рассматривается использование пассивного залога в юридическом контексте. С применением качественных и количественных, а также ситуационно-фактологических методов, исследуются юридические конструкции, их функционально-коммуникативные особенности и выполняемые ими функции в юридической речи. В исследовании также утверждается, что частота применимости пассивного залога в юридическом дискурсе обусловлена ролью самого действия, а не его исполнителя.

Ключевые слова: юридический текст, страдательный залог, совершаемое действие, исполнитель действия, функция, перевод